



ԸՆՏՐԵԼ ՃԻՇԴ ԸՆԿԵՐԸ

Սարին շատ աշխատասեր աշակերտուհի մըն է: Ան ամեն առաւօտ աշխուժութեամբ կ'արթնայ, նախաճաշ կ'ընէ, հայրիկին ու մայրիկին համբուրելով, «ցտեսութի՛ն» կ'ըսէ եւ կը մեկնի վարժարան:

Սակայն օր մըն ալ Սարին տուն կը վերադառնայ եւ կը յայտնէ, թէ յետայսու չ'ուզեր իր ուսումը շարունակել: Բայց ծնողքը չեն ընդունիր Սարինին այս առաջարկը, որովհետեւ ան աշխատասեր, առաջնակարգ եւ տիպար աշակերտուհի մըն էր ու դպրոցը շատ կը սիրէր: Արդեօք ի՞նչ պատահած էր:

Սարին կը սկսի գիշերները ուշ քնանալ, պարտականութիւններուն մէջ թերանալ եւ նոյնիսկ առաւօտեան իր դպրոցական հանրակառքը փախցնել:

Մայրիկը մտահոգուելով կ'որոշէ հարցնել անոր, թէ ի՞նչ է պատահածը:



Ան նախ կը մերժէ պատմել, բայց ետքը կը խոստովանի, թէ քանի մը դասընկերներ նեղութիւն կը պատճառեն իրեն՝ անտեղի խօսքեր արտասանելով: Մայրիկը լաւապէս մտիկ ընելէ ետք, կը պատասխանէ.

- Վաղը առաւօտ ես դպրոց կը հանդիպիմ ու վերջ կու տամ պատահածին: Սարին համամիտ չ'ըլլար մօր կարծիքին վախճալով, որ այդ հանդիպումը հակառակ ազդեցութիւն կրնայ ունենալ հարցին վրայ եւ ընկերները ալ արելի կը շարունակեն իրենց վատ վարմունքը:

Մայրն ալ նոյնպէս կը համոզուի Սարինին խօսքերուն ու միայն կը խնդրէ իրմէ, որ միայն թուղթ մը եւ գրիչ մը բերէ եւ նստի իր մօտ:

Սարին կը կատարէ մօր խնդրանքը:

- Այս թուղթին վրայ սկսէ՛ արձանագրել դասարանիդ մէջ գտնուող բոլոր դասընկերներուդ անունները, - կ'ըսէ մայրը:

- Բայց մայրի՛կ, այս թուղթը տնօրէնութեան կամ ուսուցիչներուն պիտի ջանձնես, այդպէս չէ՞, - կը ստուգէ Սարին:


- Ո՛չ, պիտի չյանձնեմ, - կը պատասխանէ մայրիկը:

Սարին իր բոլոր դասընկերներուն անունները կը գրէ թուղթին վրայ:

- Յիմա, դեղին գրիչը ա՛ն ու սկսէ՛ շրջանակ կազմել բոլոր այն անուններուն շուրջ, որոնք քեզի հանդէպ կը սխալին: Իսկ կարմիր գրիչը գործածէ՛ շրջանակ կազմելու բոլոր այն անուններուն շուրջ, որոնք կը մերժեն սխալ արարքները եւ նեցուկ կը կանգնին քեզի:

Սարին կը կատարէ մօր խնդրանքը եւ այդ պահուն միայն կը հասկնայ, թէ ան ի՞նչ ըսել կ'ուզէր ան...

ԹԻՒԵ ՊԱՏՐԱՍՏԵՅ՝ ՄԱՐՏԻՆԻ ԱՇԽԱՏԱՆՑՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅ՝ ՈՍԿԱՅԻ ԲԵՐՈՇԵՆՆԸ



Կրնա՞ս լուծել բազմապատկութեան գործողութիւնը օգտագործելով: Բոլոր թիւերը կրկնապատկէ՛ եւ պատասխանները արձանագրէ՛ իւրաքանչիւր թիւին թով:

Պատասխաններ հերթով՝ 4, 6, 8, 10, 12, 14, 16, 18, 20, 22, 24

ՀԱՆՏԵԼՈՒԿ

Ծակտիկներով լեցուն եմ, բայց շատ ջուր կը պահեմ: Ո՞վ եմ ես:

Եղւոսիկ : Լուսինա

ԳԻՏԵ՛Ս, ԹԵ...

- 1.- Ամեն քայլափոխի, մեր մարմինը 54 մկան կը գործածէ:
- 2.- Իւրաքանչիւր անձ մէկ տարուան ընթացքին մօտաւորապէս 4 միլիոն անգամ իր աչքերը կը թարթէ:
- 3.- Յօնքերը կը պարունակեն մօտաւորապէս 500 մագի թել:



Գտի՛ր պահուած իրերը եւ գունաւորէ՛ գանտը:



ՀԱՅԿ ՆԱՅԱՊԵՏ

(Մեր Ազգին Ազատատենչ Հիմնադիրը)

Հայկ իր կտրիճներով շրջապատուած՝ ուշադրութեամբ հետեւեցաւ ճակատամարտին: Ան իր զինուորներուն ըսաւ.

- Թիւով քիչ ենք, բայց քանի արդարութիւնը մեր կողմն է, պիտի յաղթենք: Պետք է քաջութեամբ մեր երկիրն ու ազատութիւնը պաշտպանենք, որպէսզի մեր յաջորդներն ալ կարենան ազատ ապրիլ: Այս պատմական պատերազմ է, քաջեր: Յիշենք, որ մեզի դէմ կռուողները յանցանք չունին, անոնք պարզապէս չար Բելին հրամանը կը կատարեն: Ազատութեան համը չեն գիտեր: Որպէսզի աւելի զոհեր չ'ըլլան, պէտք է անմիջապէս գտնենք Բելը եւ ոչնչացնենք զայն:

Բէլ դիմացի բլուրէն դաժան աչքերով ճակատամարտը կը դիտեր: Ան կը նկատէ, որ Հայկն ու իր զինակիցները առիւծներու պէս կը կռուին, Վահանը ձախ ձեռքին բռնած, իսկ Նիզակը՝ աջին: Բէլ կը մտածէ, որ եթէ անմիջապէս յաղթանակ չտանի, պիտի վարկաբեկուի: Հայկ եւ Բէլ անզիջող էին: Երկուքն ալ անվախ էին: Սակայն Հայկ բարի եւ ազատասեր էր, իսկ Բէլ՝ չար ու բռնակալ:

Հայկ կը կռուէր ազատութեան համար, իսկ Բէլ՝ ուրիշները իրեն ենթարկելու համար: Ո՛վ պիտի յաղթէր...

Հայկ անմիջապէս ձիէն կը ցատկէ եւ առաջ կը նետուի, ոտքը ամբօրէն կը տեղաւորէ հողին վրայ, աղեղը կը լարէ, նշան կ'առնէ եւ իր երեքթեւեան նետը կ'արձակէ դէպի Բելի կուրծքի պղինձէ տախտակին եւ թիկունքէն դուրս գալով զայն հողին կը քամէ:

Ամբարտաւան բռնատերը գետին կը տապալի եւ վերջին շունչը կը փչէ:

Այսպէս, պատմութեան առաջին բռնատիրութեան դէմ ճակատամարտը վերջ կը գտնէ՝ ազատութեան խորհրդանիշ դարձած Հայկ Նահապետի յաղթանակով:

Երբ Բէլ կ'իյնայ, իր զինուորները սարսափած կը սկսին փախչիլ՝ Հայկի բանակին ձգելով անհամար ձի, ջորի եւ ուղտ:


Հայկ ճակատամարտի վայրին մէջ Նոր քաղաք մը կը շինէ եւ զայն Հայք կ'անուանէ: Ան Բելի դիակը զմռսել կու տայ, կը տանի Հայք եւ կը թաղէ զայն բարձր տեղ մը, որպէսզի իր յաջորդները տեսնեն բռնակալին մահը եւ յիշեն իրենց նախնիներուն քաջագործութիւնը, օրինակ առնեն իրենց ազգին պատուաբեր անցեալէն եւ անով հպարտանան:

Այս յաղթանակէն ետք, Հայկ իր բանակով կը վերադառնայ, Նորանոր քաղաքներ կը շինէ եւ իր երկիրը կ'ընդարձակէ:

Այսպիսով՝ ան իր յաջորդներուն պաշտամունքի առարկան կը դառնայ:

Իր անունով մեր երկիրը կը կոչուի՝ ՀԱՅԱՍՏԱՆ եւ մենք՝ ՀԱՅ:

(Վերջ)



ՀՈՎԱՆՈՅԸ

Հովանոցը 11-րդ դարեն սկսեալ օգտագործուած է Չինաստանի մէջ՝ կիզիչ արեւէն պաշտպանուելու համար:

Բաբելոնի կամ հին Եգիպտոսի մէջ հովանոցը իշխանութեան խորհրդանիշ էր, ուստի կը գործածուէր միայն թագաւորներու եւ իշխաններու կողմէ:

Առաջին անգամ հին հռոմէացիները օգտագործեցին զայն՝ անձրեւին տակ զբօսելու համար:

18-րդ դարեն սկսեալ, հովանոցը վերջնականապէս մուտք գործեց Եւրոպա, որպէս անհրաժեշտ առարկայ: Հիմա հովանոցը կ'օգտագործուի ամբողջ մարդկութեան կողմէ:

